10762

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի
նախարար
Հակոբ Սիմիդյան

«26» 07 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0106-22

Ձեռնարկողը՝ «ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 29 ա, բն.3

Գործունեությունը՝ **Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքային դաշտի Հարավարևելյան («Վլադ») տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0106-22

«26» 07 2022թ.

Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքային դաշտի Հարավարևելյան («Վլադ») տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՖԵՐՈ ԳՐՈՒՊ ԳՈԼԴ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Հայտ/, Ծրագիր
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, բն. Լուսագյուղ

Ներածական մաս: «Ֆերո Գրուպ Գոլդ» ՍՊ Ընկերության կողմից նախատեսվում է Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքային դաշտի Հարավ-արևելյան /Վլադ/ տեղամասում կատարել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 2)-րդ կետի «ա.» ենթակետի՝ Թուխմանուկի հանքային դաշտի Հարավարևելյան («Վլադ») տեղամասում երկրաբանական ուսումնասիրությունը դասակարգվում է որպես «գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Ուսումնասիրության ենթակա տարածքը գտնվում է, Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին, Հանքավան-Մելիքգյուղ ջրբաժանից 2-3կմ դեպի հարավ՝ ռելիեֆի 2000-2800մ բացարձակ բարձրությունների սահմաններում: Տեղամասի տարածքն անտառազուրկ է, հանդիսանում է համայնքային սեփականության արոտավայր, գտնվում է Ապարան համայնքից 5-6կմ հյուսիս-արևելք ուղղությամբ՝ Լուսագյուղ բնակավայրի վարչական սահմաններում: Հանքային շրջանը բնութագրվում է խիստ կտրտված, բարձր լեռնային ռելիեֆով, խոր կիրճերով և ձորակներով: Շրջանի ջրագրական ցանցը ներկայացված է Քասախ գետով և վերջինիս վտակներով: Բուն հայցվող տարածքում մակերևույթային հոսքերը բացակայում են: Մոտակա աղբյուրը գտնվում է տեղամասի հարավ-արևմտյան մասում՝ մոտ 250մ հեռավորության վրա, հայցվող տարածքից բաժանվում է ջրբաժանով;

Թուխմանուկի հանքային դաշտի Հարավ-արևելյան տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այն Արագածոտնի և

Կոտայքի մարզերի սահմանագիծ հանդիսացող Ծաղկունյաց լեռնաշղթայի ջրբաժանով սահմանակից է «Հանքավան» պետական ջրաբանական արգելավայրին, գտնվում է ջրբաժանի հակառակ կողմում /տեղամասի մոտ հատվածը գտվում է 100 մ հեռավորության վրա/:

Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով Ընկերության կողմից հայցվող՝ 67.5 հա մակերեսով տարածքը սահմանափակվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով (ըստ Arm WGS-84 համակարգի).

Կետի համարը	Կոորդինատները	
	X	Y

Կետի համարը	Կոորդինատները	
	X	Y

1	4500320	8448570
2	4500400	8448780
3	4500850	8449250
4	4500120	8449700
5	4499800	8449580
6	4499420	8448950
7	4499280	8448650

8	4499450	8448500
9	4499780	8448930
10	4499900	8449320
11	4500300	8449450
12	4500430	8449430
13	4500120	8448670
1	4500320	8448570

Ուսումնասիրության եթակա տարածքը գտնվում է Թուխմանուկի հանքային դաշտի հարավ-արևելյան թևում, բնութագրվում է երկրաբանական կառուցվածքի բարդությամբ: Հարավ-արևելյան տեղամասի հանքայնացումը տեղակայված է մոտ 67.5 հա տարածքի սահմաններում, ներկայացված է հինգ՝ թիվ 1, 2, 3, 4, 5 հանքային գոտիներով: Թիվ 1, 2, 3 հանքային գոտիները երկրաբանական կառուցվածքով հանդիսանում են քվարց-սուլֆիդային հանքայնացմամբ մարմիններ՝ միմյանցից գրեթե զուգահեռ տարածմամբ, իսկ թիվ 4 և 5 հանքային գոտիները տարածվում են դեպի հյուսիս-արևմուտք: Հանքային գոտիները հյուսիս-արևելք ուղղությամբ շարունակվում են դեպի Հանքավանի հանքային դաշտի ոսկու հանքերևակումներ, իսկ հարավ-արևմտյան ուղղությամբ ձգվում են դեպի Լուսագյուղի և Միրաքի տեղամասեր:

Ոսկու առկայությունը փաստված է գրեթե բոլոր հանքային և մի շարք ոչ հանքային միներալներում: Հանքաքարին բնորոշ է պղնձի, կապարի, ցինկի ոչ բարձր պարունակություններ: Հարավ-արևելյան տեղամասում սպասվում է հիմնական երկու տիպի հանքաքարեր՝ օքսիդային և սուլֆիդային:

Հանքերևակման ուսումնասիրության համար հետախուզական ցանցը և հետախուզական փորվածքների խտությանն ընտրվել է համաձայն՝ ՀՀ ՏԿԵ նախարարի 2021թ. օգոստոսի 11-ի թիվ 06-Ն հրամանի N 1 հավելվածով սահմանված՝ ավազի և ոսկու հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի: Հետախուզահատումների միջև հեռավորությունները C_1 կարգի պաշարների համար ըստ տարածման առաջարկվում է 40-60մ, ըստ անկման՝ 40-60մ: Ծրագրով նախատեսված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման մեթոդները և եղանակներն ընտրելիս հաշվի է առնվել նաև միջազգային լավագույն փորձը /մասնավորապես՝ ավստրալիական միջազգային ընդունված JORC ստանդարտը/, համաձայն որի կատարվելու է.

- մակերեսային լեռնային փորվածքների փաստագրում և նմուշարկում,
- հետախուզական հորատանցքերի եռասյունակային հորատում,
- հետախուզական հորատանցքերի տեխնիկական և երկրաբանական փաստագրում և նմուշարկում,
- նմուշների մշակում և անալիզների իրականացում լաբորատոր պայմաններում,
- հանքաքարի տեխնոլոգիական փորձարկումներ լաբորատոր և գործարանային պայմաններում,
- հետախուզական աշխատանքների արդյունքներով պաշարների հաշվարկմամբ երկրաբանական հաշվետվության կազմում՝ ամբողջ ստացված ինֆորմացիայի թվայնացմամբ:

Պաշարների հաշվարկման համար նախատեսվում է կիրառել "Datamine" համակարգչային ծրագիրը, որը կապահովի 3D եռաչափ բլոկ-մոդելի ստացումը և պաշարների հաշվարկի արագ և ճշգրիտ իրականացումը՝ ցանկացած եզրագծային պարունակության և հանքաքարի հանույթի դեպքում:

Առաջնահերթ նախատեսվում է ձորակներով կատարել շլիխային (սղկվածքային) հանույթ՝ փոքրածավալ նմուշներով, ընդամենը 100 նմուշ: Հանույթն իրականացվելու է

անջուր ձորակներից նմուշներ վերցնելով՝ 8-10լիտրանոց ձեռքի հարմարանքով, նպատակ ունենալով բացառելու շրջակա միջավայրի վրա որևէ ազդեցությունը: Նմուշները կենթարկվեն լաբորատոր միներալոգիական հետազոտության:

Տեղամասի հանքային մարմինների բացման, հանքայնացման օրինաչափությունները, հանքամարմինների ձևաբանությունը և հզորությունը պարզաբանելու նպատակով նախատեսվում է անցնել վերգետնյա լեռնային փորվածքներ՝ ապահովելով C_1 կարգի պաշարների հաշվարկման համար մինչև 50մ հեռավորության ցանց: Թիվ 1, 2 և 3 հանքային գոտիների հարավ-արևմտյան մասում նախատեսվում է ուսումնասիրել մոտ 50մ հեռավորությամբ մինչև 10մ երկարության 21 հետախուզաառուներով՝ ընդհանուր 210գ.մ: Թիվ 1, 2 և 3 հանքային գոտիները կուսումնասիրվեն 3-ական 10գծ.մ-անոց հետախուզաառուներով, ընդհանուր 360գծ.մ. (12կտրվ. x 3առու x 10մ=360գծ.մ): Տեղամասի հարավ-արևմտյան ծայրամասում (այսպես կոչված «Լճերի տեղամաս») նախատեսվում է նախկինից հայտնի 5 հանքային գոտիներն ուսումնասիրել 50մ հեռավորությամբ, միջինը 6մ երկարությամբ 47 հատ առուներով /ընդհանուր 282գծ.մ./: Թիվ 4 և 5 հանքային գոտիների ուսումնասիրության համար, միջինը 75մ երկարությամբ կանցկացվի 12 հատ հետախուզաառու /ընդհանուր 900գծ.մ/: Հետախուզաառուների վերը նշված ծավալները միասին կազմում են 1752գծ.մ.: Նախատեսվում է անցնել ևս 248գծ.մ. հետախուզաառու, որոնք չեն տեղակապվում: 1:5000 մասշտաբի երկրաբանական քարտեզի վրա հետախուզաառուների ընդհանուր ծավալը կկազմի՝ 2000գծ.մ. x 1.5մ x 0.8մ=2400մ^3:
Հետախուզաառուների անցումը նախատեսվում է իրականացնել ձեռքով և մեքենայացված՝ էքսկավատորի միջոցով:
Նախատեսվում է անցնել նաև 200 հատ 5մ խորությամբ, 1.25մ^2 կտրվածքով հետախուզահորեր, ընդհանուր՝ 1000գծ.մ: Հետախուզահորերը երկրաբանական քարտեզի վրա չեն կապակցվում: Բոլոր լեռնային փորվածքները պետք է փաստագրվեն ըստ միջազգային JORC ստանդարտի՝ 1:200 մասշտաբի գծապատկերների կազմումով, ֆոտոփաստաթղթավորմամբ:

Հետախուզաառուները, հետախուզահորերը, համաձայն անվտանգության տեխնիկայի և շրջակա միջավայրի պահպանության կանոնների, փաստագրումից և նմուշարկումից հետո ենթակա են լցման և ռեկուլտիվացիայի՝ ընդհանուր 3650մ^3 ծավալով, ընդհանուր մակերեսը կկազմի 1850մ^2 (առուներ և հորեր):
Նախատեսվող հորատման աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի 9100գծ.մ, 60 հատ հորատանցք: Հորատումն իրականացվելու է 93, 76մմ տրամագծով ալմաստե թագիկներով՝ հանուկային, միջազգային ստանդարտներով ընդունված եռասյունյակ մեխանիզմներով: Հորատման ընտրված ձևը պետք է ապահովի հանքային մարմիններից 95%-ից ոչ պակաս հորատահանուկի ելք: Հորատանցքերի լվացումը կատարվելու է պոլիմերային լուծույթներով, շրջանառու ջրի համակարգով՝ հորատում իրականացնող ընկերության կողմից բաքերով ներկրման միջոցով:
Ընդհանուր 9100գծ.մ. հորատանցքերի հորատահանուկը ենթակա է մանրակրկիտ փաստագրման՝ համապատասխան հորատանցքերի սյունակների կազմմամբ:
Նախատեսվում է նմուշարկել հետախուզաառուների երկարության միջինը 25%-ը:
Ակոսային նմուշարկման ծավալները առուներից կկազմեն՝ 2000գծ.մ x 25% = 500 նմուշ, իսկ հորերից կվերցվեն 200 նմուշ:
Ակոսային նմուշարկման նպատակով, ծրագրով նախատեսվում է կատարել համախառը մուշարկում /նմուշը կկազմի 0.7տ/: Ընդամենը նախատեսվում է 22 համախառը նմուշ /88 լաբորատոր նմուշ/:

Հորատումից ստացված (բոլոր հորատանցքերի) հորատահանուկը ենթարկվելու է նմուշարկման՝ միջազգային ստանդարտներով ընդունված ալմաստ սղոցներով սղոցման /կիսման/ միջոցով: Նմուշարկվող հորատահանուկի ծավալը ընդհանուր կկազմի 2320 նմուշ: Նմուշների մշակումը կատարվում է միայն լաբորատոր պայմաններում, պայմանագրային հիմունքներով: Նմուշների մանրացումը մեքենայացված է: Պղնձի, կապարի և ցինկի պարունակությունների որոշման նպատակով նախատեսվում է շուրջ 1000 նմուշ ենթարկել քիմիական անալիզների: Այս նույն նմուշներով որոշվելու է միներալոգիական կազմը:

Ուսումնասիրության ծրագրով նախատեսվում է կատարել նաև 67.5հա տարածքի 1:2000 մասշտաբով տոպոգրաֆիական հանույթ: Մագնիսահետախուզության մեթոդով նախատեսվում է ուսումնասիրել ամբողջ տարածքը՝ 1:2000 մասշտաբի հանույթի միջոցով (մոտ 67.5 հա): Երկրաֆիզիկական համալիր մեթոդներով հետազոտության աշխատանքները նախատեսվում է կատարել պայմանագրային հիմունքներով:

Ըստ նախնական տվյալների տարածքում սպասվում է տեխնոլոգիական երկու տիպի հանքաքար՝ օքսիդային և սուլֆիդային, ոսկու մինչև՝ 2.6-4.0գ/տ պարունակություններով, որոնք կարող են մշակվել նոր տեխնոլոգիական սխեմաներով:

Գործարանային պայմաններում հանքաքարի տեխնոլոգիական փորձարկումների խնդիրն է հանդիսանում տարբեր հանքաքարերից (օքսիդացված և սուլֆիդային) մետաղների առավելագույն կորզման ապահովումը և առանձին խտանյութերի ստացումը: Երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ փորձնական հանույթի ֆիզիկական ծավալները կիրականացվեն սահմանված կարգով՝ որոշակի աշխատանքներ կատարելուց հետո: Նախնական կանխատեսումներով սպասվում է ոսկու պարունակությամբ հանքաքար, որի տեխնոլոգիական փորձարկումներն, ըստ նախնական պայմանավորվածության կանցկացվեն Հրազդանի ՈԿՖ-ում:

Փորձնական բացահանքերը նախատեսված է անցկացնել 5մ բարձրությամբ հանքաստիճաններով, երկրորդ հանքաստիճանը /5-10մ / կանցկացվի առանց կողային մակաբացման՝ էքսկավատորի խոփով անմիջապես հանքաքարի արդյունահանմամբ: Փորձնական բացհանքերի անցման ժամանակ կհեռացվի հանքային մարմինների մակերեսում առկա մակաբացման ապարների մոտ 2մ-անոց շերտը, որից հետո 5 մ խորությամբ կարդյունահանվի հանքաքարը: Թվով 5 բացահանքերը կունենան մոտ 1250մ^2 մակերես, որում ընդհանուր մակաբացման ապարների քանակը կլինի՝ 2500+375+750=3625մ^3: Փորձնական հանույթն իրականացնելուց հետո մակերեսի մակաբացման ապարները հետ կլցվեն բացահանք, փոսի հատակը կհարթեցվի:

Հորատահաստոցների տեղադրման, սարքավորումների և հումքի փոխադրման համար նախատեսվում է օգտագործել գոյություն ունեցող ավտոճանապարհները և վերանորոգել շահագործումից շատ վաղուց (70 տարուց ավելի) դուրս եկած մոտ 40կմ երկարությամբ ճանապարհները՝ փոսալցման և թափված քարերի հեռացման միջոցով: Մատույցային ճանապարհների վերանորոգումը և հորատման հարթակների կառուցումն իրականացվելու է առանց պայթուցիկ նյութերի կիրառման՝ մեխանիզմների միջոցով: Ընդհանուր նախատեսվում է հորատել 60 հատ հորատանցք: 45 հորատանցքի համար նախատեսվում է 40 հորատման հարթակի կառուցում /1,2,3 հանքային գոտիների համար/, իսկ թիվ 4 և 5 հանքային գոտիների ուսումնասիրության համար, տեղանքի հարթ կամ մեղմաթեք լինելով պայմանավորված՝ 15 հորատանցքերի համար հարթակների կառուցում չի նախատեսվում: Հարթակներից յուրաքանչյուրի մակերեսը կկամի 60մ^2, կառուցվելիք հարթակների ընդհանուր մակերեսը կկազմի մոտ 40x60մ^{2}x20%=480մ^2: Հանքային մարմինների տարածման սահմաններում

բուսահողային շերտ առկա է մոտ 20% տարածքում: Երկրաբանական աշխատանքների տեղամասում առուների և հորերի անցման ժամանակ տվյալ տարածքում առկա բուսահողային շերտը նախատեսվում է հեռացնել և կուտակել առանձին, անմիջական փորվածքների հարակից տարածքում, որը փորվածքների լցնելուց հետո կօգտագործվի դրանց մակերեսների ռեկուլտիվացիայի համար: Ընդհանուր 1600մ^2 մակերեսով առուների և 250մ^2 հորերի անցման ժամանակ տարածքների մոտ 20%-ից կհանվի հողաբուսաշերտ (մոտ 20 սմ հզորությամբ), որը կպահվի անմիջապես փորվածքի հարևանությամբ և կօգտագործվի փորվածքների մակերեսը ծածկելու համար: Վերականգնվող ընդհանուր մակերեսը կկազմի 370մ^2(1850մ^{2}x20%): Վերականգնման ենթակա է նաև 480մ^2 ընդհանուր մակերեսով հորատման հարթակների տարածքները և փորձնական բացահանքերի՝ 1250մ^2 մակերեսն ամբողջությամբ: Վերականգնման ենթակա մակերեսները կկազմեն ընդհանուր՝ 370+480+1250=2100մ^2, որում հողաբուսաշերտի ծավալը կկազմի՝ 850մ^{2}x20սմ+ 1250մ^{2}x10սմ=295մ^3:

Նախագծով նախատեսված խախտված հողերի լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնման միջոցառումները ներառում են՝ փորվածքների լցնում՝ հանված հողաբուսային շերտով ծածկում, հողազուրկ մակերեսների հարթեցում և ամրացում, իսկ կենսաբանական վերականգնման նպատակով կկատարվի 2100մ^2 մակերեսով տարածքում ցանքս: Հարթեցումից հետո կատարվում է փխրուն ապարների պարարտացում բնական օրգանական պարարտանյութերով՝ կենսահումուսով, այնուհետև՝ տարածքին բնորոշ մարգագետնա-տափաստանային բուսատեսակների (ցորնուկ) սերմերով կիրականացվի ցանք: Ընդհանուր՝ լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնման աշխատանքների արժեքը գնահատվել են 774790 ՀՀ դրամ /որի նախահաշվային արժեքների հաշվարկումն իրականացվել է ՀՀ Կառավարության 18.08.2021թ. թիվ 1352-Ն որոշմամբ սահմանված կարգով և ծախսերը ներառված են նախահաշվում/:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար նախատեսվում է ճանապարհների պարբերաբար ջրման աշխատանքներ: Տեխնիկական նպատակներով օգտագործվող ջուրը գնվելու է Լուսագյուղ բնակավայրից և ավտոցիստեռնով տեղափոխվելու է աշխատանքների իրականացման վայր: Կեղտաջրերը կհավաքվեն շարժական զուգարանահանգույցում, որը կդատարկվի և կհեռացվի Ապարանի քաղաքային կոյուղի հատուկ ծառայության կողմից: Համաձայն Հայտի տեղեկատվության հետախուզական աշխատանքների ժամանակ անցած փորվածքները ջրային հորիզոնների հետ չեն հատվելու:

Թուխմանուկի հանքային դաշտի Հարավարևելյան («Վլադ») տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են միջոցառումներ, այդ թվում՝

- ուսումնասիրվող տարածքներում նավթամթերքների պահեստավորման, մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքների բացառում,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր /Ընկերությունը ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո պայմանագիր կկնքվի համայնքի հետ/,
- արտանետվող վնասակար նյութերի չեզոքացնող սարքերի /զտիչներ/ տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,

- փոշենստեցման նպատակով՝ ճանապարհի և հորատման հարթակների ջրցան /որի անհրաժեշտ տեխնիկական ջուրը պայմանագրային հիմունքներով կգնվի և կտեղափոխվի տեղամասեր մոտակա բնակավայրերից/,

- կեղտաջրերի հավաքում շարժական զուգարանահանգույցում, սահմանված կարգով հեռացում կոյողո ցանց,

- մակաբացման ապարների օգտագործում մակերեսային լեռնային փորվածքների ռեկուլտիվացիայի և հանութային տարածությունների լցման համար,

- աղմուկի և թրթռումների մակարդակի վերահսկողություն, օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման նպատակով:

- բեռների և աշխատակազմի փոխադրում գոյություն ունեցող ճանապարհներով՝ կենսամիջավայրի խախտումը բացառելու նպատակով,

- աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքների և հորատման հրապարակների ռեկուլտիվացիա/վերականգնում,

- կենդանիների բների հայտնաբերման դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների իրականացման վայրերից դուրս,

- մինչև դաշտային աշխատանքների սկիզբ աշխատանքներին մասնակցող անձնակազմի վերապատրաստում /ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում/,

- տեղամասերի տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տվյալ բուսատեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացում՝ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հորատումը և դրա հետ փոխկապակցված բոլոր աշխատանքները կատարվելու են մասնագիտական կազմակերպությունների կողմից և հորատման թագագլխիկների թափոնները, նավթամթերքների և քսայուղերի մնացորդները ևս տնօրինվելու են տվյալ մասնագիտացված կազմակերպությունների կողմից, ուստի այս թափոնների կառավարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Քանի որ մակաբաղցման ապարներն ամբողջովին կօգտագործվեն խախտված տարածքների լցման համար, Ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանա:

Մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքները իրականացվելու են Ապարան համայնքում, կամ Լուսագյուղ բնակավայրում՝ համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող ընկերությունների տարածքում:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար կարևորվում է աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ շարժական կապի միջոցների առկայության ապահովումը, հետախուզական, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի պատրաստվածությունը, ինչպես նաև առաջին բուժօգնության միջոցների առկայությունը:

Թուխմանուկի հանքային դաշտի Հարավ-արևելյան տեղամասում երկրաբանական ուսումնասիրությունների ողջ ժամանակահատվածի համար Ընկերության կողմից մշակվել է շրջակա միջավայրի կառավարման և մոնիթորինգի ծրագիր: Ընկերության կողմից, ուսումնասիրության աշխատանքներին զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես մշտադիտարկման օբյեկտներ դիտարկվել են՝

մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, ջրային ռեսուրսները կենսաբանական միջավայրը: Մշտադիտարկումների իրականացման համար տարեկան ծախսերը գնահատվել է 800 հազար ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների կանխարգելման, կամ մեղմացման նպատակով նախատեսված միջոցառումները /ներառյալ՝ երևակման տարածքում աշխատանքային միջավայրի անվտանգության ապահովման և հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումները/ ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայտի վերաբերյալ 2022 թվականի հուլիսի 4-ին կայացած 2-րդ հանրային քննարկման ընթացքում մասնակիցների կողմից բարձրացվել է հարց՝ Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում աղբյուրների և մակերևութային ջրային ռեսուրսների առկայության և Լուսագյուղում սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման վերաբերյալ: Նշվածի վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացվել է լրացուցիչ հիմնավորումներ և պարզաբանումներ:

Հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Արագածոտնի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, ԿԳՄՍ նախարարությունները, կադաստր կոմիտեն, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված աշխատանքների ժամանակ Հայտում նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում և ստորև բերված փորձաքննական պահանջների կատարումն ապահովելու դեպքում շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկանխարգելվեն, կամ կնվազեցվեն:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ փորձնական հանույթի ծավալներն իրականացնել համաձայն ՀՀ ՏԿԵ նախարարի 2020 թվականի հունվարի 30-ի N01-Ն հրամանի Հավելվածի պահանջներով:
2. Գետային ցանցով շլիխային հանույթն իրականացնել չվնասելով էկոհամակարգերը և առաջնորդվել ՀՀ ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 20-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Կառավարության 20 հունվարի 2005 թվականի թիվ 64-Ն «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» որոշման պահանջներով:
3. Հողի բերրի շերտի հեռացման և պահպանման հետ կապված միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ Կառավարության 02.11.2017 թվականի թիվ 1404-Ն և 08.09.2011 թվականի թիվ 1396-Ն որոշումների պահանջներին համապատասխան:
4. Աշխատանքներն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1063-Ն, 2010 թվականի

հունվարի 29-ի <<ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին>> N71-Ն և N72-Ն որոշումների պահանջներով:

5. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

6. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թ. N 191–Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, մակերևութային և ստորերկրյա ջրեր, բուսական ծածկույթ և կենդանական աշխարհ/ մշտադիտարկումներ և արդյունքների հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

7. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց ժամանակացույցերը, ինչպես նաև Ընկերության կողմից Լուսագյուղում նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:

8. Աշխատանքներն իրականացնելիս պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքային դաշտի Հարավարևելյան («Վլադ») տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Հ. Մկրտչյան

Ընդամենը՝ 8 էջ